

100 Հարց Ս.

Հաղորդութեան Մասին
98) Ինչո՞ւ կաթոլիկ եկեղեցից հաւատացեալներուն միայն մէկ տեսակ հաղորդութիւն կու տայ: Դարերու ընթացքին Լատին եւ Ուղղափառ եկեղեցիներու միջեւ մշտական վէճի առարկայ եղած է հաւատացեալներուն մէկ կամ երկու տեսակ Ս. հաղորդութիւն բաշխելու խնդիրը: Վաղ եկեղեցւոյ գործնական ծիսական կեանքին մէջ տարածուած էր երկու տեսակով Ս. հաղորդութիւն տալը: Բայց օրինակ՝ հիւանդներուն, բանտարկեալներուն եւ եկեղեցիէն հեռու գտնուողներուն Ս. հաղորդութիւն կը տրուէր միայն հացով: Ս. Բարսեղ կեսարացիին կը խօսի անպատի ձգնաւորներուն մասին, որոնք կը հաղորդուէին միայն հացով, քանի որ նման տեղերը դժուար էր գինի պահելը: Ասիկա կը նշանակէ, որ թերեւս առաքելական շրջանէն ընդհանրական եկեղեցւոյ մէջ կենցաղավարած են հաղորդուելու երկու ձեւերն ալ: Սակայն ժամանակի ընթացքին արեւմուտքի մէջ կ'արմատաւորուի մէկ տեսակով հաղորդուելու աւանդութիւնը: Կաթոլիկները իրենց դիրքորոշումը կը բացատրեն նաեւ շարք մը պատճառներով, օրինակ՝ գուցէ պատահամբ գինին, Տիրոջ Արիւնը, գետին թափուի, որոշ մարդկանց հակացուցուած է գինի օգտագործելը, գինիի պակասութիւն եւայլն: Ծիսական այս աւանդոյթի աստուածաբանական հիմնաւորումն այն է, որ Յիսուս իր ամբողջութեամբ ներկայ է իւրաքանչիւր ձեւի մէջ:

ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ
Չգուշացէ՛ք սուր մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան ձեզի, մինչ ներքնապէս յափշտակիչ գայլեր են: (Մտք.7.15)

3-ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԳԻՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Գ.- Կ'ըսեն, թէ որովհետեւ Յիսուս Աստուած չէ, անոր երկրպագելը կամ պաշտամունք մատուցանելը ճշմարիտ աստուածապաշտութենէ շեղում եւ մոլորութիւն է, եւ Աստուծոյ դէմ գործըւած ծանր մեղք մը: Սակայն Աստուածաշունչը յստակօրէն կ'ըսէ, թէ նոյնինքն Հօր Աստուծոյ կամքն է, որ ամէնքը պատուեն Որդին ճիշդ այնպէս՝ ինչպէս Հայրը կը պատուեն, որովհետեւ Որդին չպատուողը Հօրն ալ չի պատուեր (Յովհ. 5.22-23): Պօղոս Առաքեալ կ'ըսէ, թէ Հօր Աստուծոյ կամքով, Որդիին պիտի երկրպագեն թէ՛ երկնաւորները, թէ՛ երկրաւորները, եւ թէ՛ սանդարամետականները (Փյա. 2.9-11): Եբրայեցւոց նամակին հեղինակը կ'ըսէ, թէ հայրն Աստուած Որդիին մարդեղութեան համար ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն» (Եբր. 1.6): Իսկ Յայտնութեան գիրքը ցոյց կու տայ, թէ Հայրն Աստուած եւ Քառնուկը (= մարդացեալ եւ խաչին վրայ գեցուած Որդին) հաւասար օրհնութիւն, փառք ու պատիւ ...

Միւսի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամեն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 25 ՓԵՏՐՈՒԿԱՐ 2018 ԹԻԻ 8

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ Եւ. 54.11-55.13: Բ. Կր. 6.1-7.1 ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15.1-32 ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մարդ մը երկու վաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տու՛ր ինծի»: Եւ հայրը իր վաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր վաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց պինք, խոպեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոպերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն. Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. պիս նկատէ՛ք քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ պինք ու գնաց վապելով դիմաւորեց պայն, վիպին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմուճանք եւ հագցուցէ՛ք իրեն. մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք, որովհետեւ իմ այս վաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երեց վաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրըդ պարարտ հորթը մորթեց»: Երեց վաւակը վայրացաւ եւ չուկեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. որեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիք անոր համար»:

Հայրը ըսաւ. «Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅՈՒԴԱ - ԿԻՐԵՂ ԵՒ ՄԱՅՐՆ՝ ԱՆՆԱ

Երեկ՝ Շաբաթ 24 Փետրուար, 2018-ին Հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն տօնն էր ՅՈՒԴԱ-ԿԻՐԵՂ ԵՒ ՄԱՅՐՆ՝ ԱՆՆԱՅԻ: Միասնաբար ծանօթանանք վերոյիշեալ սուրբերուն:

Այս Կիրեղը, որ կոչուած է նաեւ Կիրակոս, հրեայ էր ազգով: Նախկին անունն էր Յուդա: Ան կը բնակէր Երուսաղէմի մէջ իր մօրը՝ Աննայի հետ: Երբ դժխոյն Հեղինէ եկաւ հոն խաչափայտը փնտոնելու համար, տեղացի հրեաները գայն մատնանշեցին իբր ամենէն տեղեակը Գողգոթայի տեղական մանրամասնութեանց: Կաւանդուի, թէ խաչափայտը գտնուելէն ետք, Յուդա մկրտուեցաւ իր մօրը հետ եւ վերակոչուեցաւ Կիրեղ, ապա եպիսկոպոս ձեռնադրուեցաւ պաղեստինական վիճակի մը վրայ, եւ նոյնիսկ ատեն մը տեղակալեց Երուսաղէմի պատրիարքական Աթոռին, երբ Մեծն Կիրեղ աւտրուեցաւ: Երբ Յուդիանոս ուրացող Երուսաղէմ եկաւ, անօրինակ կտտանքներու մատնեց Կիրեղ եւ իր մայրը: Կտրել տուաւ որդւոյն աջ ձեռքը, հալած կապար լեցուց բերանը եւ մարմնոյն վրայ, եւ ի վերջոյ գեղարդով սպաննեց գայն: Իսկ Աննայի կախել տուաւ մագերէն, քերել տուաւ մարմինը մինչեւ ոսկորները, եւ այսպէս նահատակուեցան երկուքն ալ: **Սուրբեր եւ Տօներ Գիրքը**

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տեր Աստուած մեր, տո՛ւր որ աղօթեմ փրկութեանը համար այն անձերուն, որոնք բնաւ իմ փրկութեամբս չեն հետաքրքրուած: Տո՛ւր, որ օրհնեմ զիս անիծողները, եւ խնդրեմ առատ օրհնութիւն իրենց համար: Ամէն

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՄԱՐԳԻԿ ԻՆՉ ՉԵՒԵՐՈՎ ԱՏՏՈՒԾՈՅ ԶԱՒԱԿ ԿԸ ԴԱՌՆԱՆ

Մարդիկ երբեք ձեռնարկ չեն անում զանազան կրօնները կը դառնան:

1.- **ՀԱԻԱՏՔՈՎ.** «Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիները ըլլալու» (Յովհ. 1.12 Համեմատէ՛ Գղ. 3.26):

2.- **ՈՐԿԵԳՐՈՒԹԵԱՄԲ.** «Ո՛չ միայն ստեղծագործութիւնը, այլ՝ մենք եւս, որ Սուրբ Հոգին ստացած ենք իբրեւ Աստուծոյ պարգեւներուն երախայրիքը, մենք եւս ներգնապէս կը հեծենք՝ ակնդէտ սպասելով որդեգրութեան, այսինքն մեր մարմինին փրկութեան» (Հն.8.23):

3.- **ՍԻՐՈՎ.** «Տեսէ՛ք, թէ ինչպիսի՞ սիրով Հայրը մեզ սիրեց ուզելով, որ Աստուծոյ որդիներ կոչուինք եւ արդարեւ Աստուծոյ որդիներ ենք» (Ա. Յե. 3. 1):

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԺՆԵՐ

ԱՒԱՆԴԱՏՈՒՆ

Եկեղեցիները սովորաբար երկու պահարաններ ունին. մէկը՝ եկեղեցւոյ աջակողմը, որ ՄԿՐՏԱՏՈՒՆ կը կոչուի, իսկ միւսը՝ ձախակողմը, որ ՍՍՐԿՍԻՍՏԱՏՈՒՆ է: Այս ձախակողմի պահարանն է, որ ԱԻԱՆԴԱՏՈՒՆ ալ կը կոչուի, որովհետեւ հոն կը պահուին եկեղեցւոյ սպասներն ու զարդերը որոնք աւանդներ, այսինքն՝ եկեղեցւոյ յանձնուած իրեր են: Սպասներէն ու զարդերէն թանկագիններն ու ընտրելագոյնները ամրափակ յատուկ պահարանի մէջ կը պահուին, որ կը կոչուի ԳԱՆՁԱՏՈՒՆ: Այս տարբերութիւնը յառաջ բերին ճշդութեան համար: Սովորական գործածութեան մէջ աւանդատուն բառը կը գործածուի իբր պահարան անունին համանշանակ եւ երբեք պահարաններուն ալ աւանդատուն անունը կը տրուի:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՊԱՇՏՊԱՆ ՊԱՀՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՐ ԸԼԼԱՆՆ

Պահք պահողները պէտք է, որ ըլլան արթուն, որովհետեւ Սատանան կրնայ կորուստի մատնել թէ՛ պահեցողը եւ թէ՛ պահեցողութիւնը, եթէ երբեք (պահեցողը) անպարկեշտ բամբասանքներ կատարէ, ինքզինքն ուրիշներէն գերիվերցոյց տայ, կամ կերակուրները պիղծ նկատէ եւ կամ կեղծաւորներու նման պահեցողութիւն ընէ իր պահեցողութիւնը ուրիշներու նայուածքներէն հեռու պահելով, որպէսզի սնապարծ եւ կեղծաւոր չերեւայ: Բայց կը փափաքի նաեւ որ իր ժուժկաութիւնը նկատուի ուրիշներու կողմէ ու երբ ոչ ոք նշմարէ, ինք առիթը կը ստեղծէ իր խիստ պահեցողութիւնը ցոյց տալու, որպէսզի սքանչանան գայն իրագործելու իր համբերութեան վրայ: Արդարեւ, նման պահեք ո՛չ կը սրբեն եւ ոչ ալ կ'արդարացնեն, այլ կը պղծեն եւ կորուստի կը մատնեն: Եթէ մէկը ժուժկաութիւնը ցոյց տայ ուտելիքներու նկատմամբ, բայց մարմնի միւս անդամները անժուժկալ պահէ, զուր եւ իր ճիգերը: Ահաւասիկ այն ինչ որ կ'ուզեմ ըսել. եթէ մէկը իր լեզուն չզսպէ, աչքերուն, ականջներուն, մտածումներուն եւ հոգիին վրայ չհսկէ, ընկերոջ դէմ ոյս պահէ, եղբօրը դէմ ատելութիւն ունենայ, կամ կեղծաւոր կերպով բարեկամութիւն հաստատէ անոր հետ, ընկերոջը խոնարհութեամբ չծառայէ, պատիւի եւ փառքի հետամուտ ըլլայ կարծելով, որ պահեցողութիւն կ'ընէ, նման անձ մը ամբողջութեամբ պիտի խելագարի Սատանային դրդումով: Արդարեւ խոնարհ ու իսկական պահեցողութիւն չէ ասիկա, այլ՝ խաբեքայ, կեղծաւոր անպէտք եւ ծոյլ պահեցողութիւն մը, որ կրակի մէջ կ'այրի եւ ջուրի մէջ կը հալի: Նման պահեցողութենէ մարդը գորաւոր կերպով կը պատժուի:

Յովնան Մանդակունի Հայրապետ

ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԵԹԷ ՀԱՒԱՏԸՈՎ ԱՂՕԹԵՆՔ, ԱՏՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՕԳՆԷ ՄԵՉԻ:

Այն ատեն Յիսուս այսպէս աղօթեց. – Հա՛յր, երկինքի եւ երկրի *Տեր, շնորհակալ եմ քեզի, որ իմաստուններէն եւ գիտուններէն ծածկեցիր այն ինչ, որ յայտնեցիր պարզ ու համեստ մարդոց: ²Այ՛ն, Հա՛յր, դուն այսպէս ուզեցիր:

Հայրս ամէն ինչ տուած է ինձի, եւ ոչ ոք կը ցանչնայ Որդին՝ բացի Հօրմէն, եւ ոչ ոք կը ցանչնայ Հայրը՝ բացի Որդին, կամ բացի անկէ՝ որուն յայտնելու Որդին:

Ինձի եկէ՛ք դուք բոլորը, յոգնածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: Ձեր վրայ առէ՛ք իմ լուծս եւ ինձմէ սորվեցէ՛ք, որովհետեւ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէ՛ք: Քանի իմ լուծս դիւրաւ տանելի է եւ բեռս՝ թեթեւ: Մատթէոս 11.25-30

Աստուծոյ խօսեցայ ձեզի, որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք: Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին: Յովհ. 16.33

ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք, որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ: